ՊԱՅՄԱՆԱԳԻՐ #22/121
Գովազդային պաստառների տպագրման և գովազդի տարածման մասին

ք. Երևան **04.11.2022թ.**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Գովազդատու», ի դեմս Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Գովազդակիր», ի դեմս նախագահ Գ. Նուշիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Գովազդատուն պատվիրում է, իսկ Գովազդակիրը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի անբաժանելի մասերը հանդիսացող Հավելված 1-ով և Հավելված 2-ով նախատեսված տպագրման և գովազդի տեղաբաշխման ծառայությունները, իսկ Գովազդատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Գովազդատուն իրավունք ունի՝

2.1.1. Գովազդակրից պահանջել պատշաճ մատուցել սույն պայմանագրի Հավելվածներով նախատեսված ծառայությունները:

2.1.2. Սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները Գովազդակրի կողմից չկատարելու դեպքում՝ պահանջել վճարել սույժ՝ յուրաքանչյուր չկատարված օրվա համար՝ չմատուցված ծառայությունների արժեքի 0.1%-ի չափով, բայց ոչ ավել քան չմատուցված ծառայությունների արժեքի 10 տոկոսը:

2.1.3. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Գովազդակրին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ (օրինակ լուսավորության, պաստառի վիճակի հետ կապված),

2.1.4. Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Գովազդակրին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:

2.1.5. Ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք 7 /յոթ/ օր առաջ տեղեկացնելով Գովազդակրին:

2.1.6.1. թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն: Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը:

2.2. Գովազդատուն պարտավոր է՝

2.2.1. Սույն պայմանագրի կնքման պահին Գովազդակրին պատշաճ տրամադրել բավարար չափով անհրաժեշտ գովազդային տեղեկություններ:

2.2.2. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2.3. Գովազդակիրը իրավունք ունի՝

2.3.1. Գովազդատուից պահանջել տրամադրել բավարար չափով գովազդային տեղեկություններ:

2.3.2. Գովազդատուից պահանջել ժամանակին վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2.3.3. Գովազդը տեղադրել համապատասխան մարմինների կողմից անհրաժեշտ թույլտվությունները ստանալուց հետո:

2.3.4. Սույն պայմանագրի 3.7 կետով սահմանված ժամկետ(ներ)ը խախտվելու դեպքում Գովազդատուից պահանջել վճարել տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, չվճարված գումարի 0.1%-ի չափով, բայց ոչ ավել քան չվճարված գումարի 10 տոկոսը:

2.3.5. Ապամոնտաժված պաստառները Գովազդատուի կողմից 1 ամսվա ընթացքում չվերցնելու դեպքում ոչնչացնել դրանք, առանց այդ մասին Գովազդատուին տեղեկացնելու:

2.4. Գովազդակիրը պարտավոր է՝

2.4.1. Մատուցել գովազդային ծառայություններ՝ տեղաբաշխել, ապամոնտաժել (առանց հավելյալ վճարի) և սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել գովազդի անխափան տարածումը,

գովազդային վահանակների մաքրությունը էլեկտրասնուցումը, ըստ անհրաժեշտության՝ լուսավորությունը և Ծառայությունների պատշաճ մատուցման համար պահանջվող այլ տեխնիկական սպասարկումը:

2.4.2. Գովազդային պաստառը վնասվելու դեպքում անհապաղ վերանորոգել և վերականգնել նախնական տեսքը:

2.4.3. Ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու դեպքում լրացնել չմատուցված Ծառայությունների ժամանակահատվածը՝ Գովազդատուի հետ նախապես համաձայնեցնելով դրա կարգը:

2.4.4. Անհապաղ վերացնել Գովազդատուի կողմից Գովազդի տարածման ծառայություններում հայտնաբերված թերությունները:

2.4.5. Առանց Գովազդատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել վերջինիս կողմից տրամադրված՝ տեղաբաշխման ենթակա գովազդի բովանդակությունից շեղում:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 110 400 (երեք միլիոն մեկ հարյուր տաս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները, որից **987 840 (ինը հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ Հավելված 1-ով նախատեսված տպագրման ծառայությունների արժեքն է, իսկ 2 122 560 (երկու միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ Հավելված 2-ով նախատեսված գովազդի տեղաբաշխման և տարածման ծառայությունների արժեքը՝** համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով և Հավելված 2-ով նախատեսված նախահաշիվների:

3.2. Գովազդատուն սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված գումարը վճարում է հանձնման-ընդունման ակտի և հարկային հաշվի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Գովազդատուն Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով: Ծառայությունների դիմաց վճարելու Գովազդատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Գովազդատուի բանկային հաշվից ելքագրման պահին:

3.4. Բանկային ծախսերը Գովազդատուի բանկում կրում է Գովազդատուն, իսկ Գովազդակրի բանկում՝ Գովազդակիրը:

3.5. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Գովազդակիրը պարտավորվում է 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.6. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուն Գովազդակրի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.7. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Գովազդատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.6. կետում նշված ժամկետում Գովազդակրին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.1.6.1 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

3.8. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը Գովազդատուի կողմից ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

3.9. Սույն պայմանագրի 3.7 կետով նախատեսված վճարման ժամկետ(ներ)ը 10 աշխատանքային օր խախտելու դեպքում Գովազդակիրը իրավունք ունի առանց նախազգուշացման դադարեցնել ծառայությունների մատուցումը և ապամոնտաժել գովազդային նյութը:

4. Պայմանագրի գործողության և ծառայության մատուցման ժամկետները

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների կատարման ավարտը:

4.2. Գովազդատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Գովազդատուն Գովազդակրին վճարում է մինչև սույն պայմանագրի լուծումը փաստացի մատուցված ծառայությունների վճարը, ինչպես նաև տուգանք՝ չմատուցված ծառայությունների 20%-ի չափով:

4.3. Սույն պայմանագիրը ցանկացած պահի կարող է լուծվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ղեկավարների ակտերը եւ այլ իրավիճակներ, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Այն կողմը, որի պարտավորությունների կատարումը ընդհատվում է վերոնշյալ պատճառներով, պարտավոր է անհապաղ ծանուցել մյուս կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին:

6.2. Եթե ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ իրավիճակը շարունակվում է տաս օրից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին: Նման դեպքում Կողմերի միջև փոխադարձ վերջնահաշվարկի օր է համարվում պարտավորությունների փաստացի դադարեցման օրը, որի մասին համապատասխան Կողմը ծանուցել էր մյուս Կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր իրավական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրի հավելվածները և ակտերը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝ համապատասխան փաստաթուղթ կազմելու և երկկողմանի ստորագրելու միջոցով: Դրանք նույնպես հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Գովազդատուն պատասխանատվություն է կրում տրամադրվող գովազդվող նյութի իրականությանը համապատասխանող տեղեկատվության համար:

7.5. Պայմանագրի սահմաններում կողմերի միջոցով ներկայացվող գովազդային տեղեկությունները և գովազդվող նյութի բովանդակությունը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

7.6. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի 8-րդ կետով նշված վավերապայմանների և հասցեների փոփոխության դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել միմյանց, այլապես կողմին հայտնի հասցեով ծանուցումը կհամարվի պատշաճ ծանուցում:

7.7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Գովազդակիրը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Գովազդատուի համար, այսինքն, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Գովազդակրի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Գովազդակրի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Գովազդատուն պարտավորվում է Գովազդակրին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Գովազդակրի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

7.8. Եթե սույն պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, ապա նման որոշումը չի ազդում մյուս կետերի վրա և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը: Կողմերը համաձայն են, որ սույն պայմանագրի կետերից որևէ մեկը ուժը կորցրած կամ անլուծելի լինելու դեպքում, նրանք անհապաղ բանակցությունների միջոցով կբարելավեն նշված կետը՝ այն առավելագույն ձևով արտահայտելով Կողմերի իրական մտադրությունը կապված տվյալ հարցի հետ:

7.9. Այն պայմանները, որոնք ներառված չեն սույն պայմանագրում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

1. Կողմերի հասցեներն ու բանկային վավերապայմանները

Գովազդատու
«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ
Իր. հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500220826710001
ՀՎՀՀ 01540062
Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Գովազդակիր
«Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ
ք. Երևան, Մոնթե Մելքոնյան 31
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150019537087095
ՀՎՀՀ 01510268
Հեռ.՝ 096 56 00 54
Նախագահ՝

Գ. Նուշիկյան

04.11.2022թ. գովազդային պաստառների տպագրման և գովազդի տարածման մասին թիվ 22/121 պայմանագրին կից
Հավելված 1

ք. Երևան **04.11.2022թ.**

Գովազդակիրը իրականացնում է պաստառների տպագրության ծառայության մատուցում հետևյալ պայմաններով.

Հ/Հ	Չափ (մ)	Քանակ (հատ)	Ընդհանուր մակերես (քմ)	Միավորի արժեք (կողմ) (առանց ԱԱՀ)	Ընդհանուր գումար (առանց ԱԱՀ)
1	3x6	7	126	2.400	302.400
2	3x12	1	36	2.400	86.400
3	4x12	1	48	3.200	153.600
4	1.2x1.8	39	84.24	7.200	280.800
	Ընդամենը				823.200
	ԱԱՀ 20%				164.640
	Ընդամենը ներառյալ ԱԱՀ				**987.840**

Գովազդատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Գովազդակիր
«Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ

Նախագահ՝

Գ. Նուշիկյան

04.11.2022թ. գովազդային պաստառների տպագրման և գովազդի տարածման մասին թիվ 22/121 պայմանագրին կից
Հավելված 2

ք. Երևան **04.11.2022թ.**

Գովազդակիրը գովազդային վահանակների միջոցով իրականացնում է գովազդային պաստառների տեղաբաշխման և գովազդի տարածման ծառայությունների մատուցում հետևյալ պայմաններով:

	Գովազդային վահանակների հասցե	Կողմ	Չափ	Լուս.	Քանակ	Ծառայությունների մատուցման ժամկետ	Ամսական վճար (առանց ԱԱՀ)
1	Արշակունյաց 3	Բ	3x6	արտաքին	1	12.11.2022-11.12.2022	95.040
2	Արմենակյան-Հերացի	Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022	95.040
3	Բաղրամյան Սոսե	Ա/Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022	190.080
4	Կիևյան 8	Ա/Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022	190.080
5	Կիևյան 18	Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022	95.040
6	Կիևյան 32 (Prizmatron)	Ա	4x12	արտաքին	1	12.11.2022-11.12.2022	253.440
7	Կասյան 2 (Տանիք)	Ա	3x12	արտաքին	1	12.11.2022-11.12.2022	190.080
8	Կարապի Լիճ	Բ	1.2x1.8	ներքին	7	12.11.2022-11.12.2022	140.000
9	Մաշտոց - 35-37	Ա	1.2x1.8	ներքին	3	12.11.2022-11.12.2022	60.000
10	Մաշտոց - Օպերա	Բ	1.2x1.8	ներքին	4	12.11.2022-11.12.2022	80.000
11	Մաշտոց Պուշկին	Ա/Բ	1.2x1.8	ներքին	8	12.11.2022-11.12.2022	128.000
12	Սայաթ-Նովա (Սկզբնամաս)	Ա/Բ	1.2x1.8	ներքին	6	12.11.2022-11.12.2022	120.000
13	Թումանյան 30, 32, 34	Ա/Բ	1.2x1.8	ներքին	6	12.11.2022-11.12.2022	72.000
14	Թումանյան 25	Ա	1.2x1.8	ներքին	1	12.11.2022-11.12.2022	12.000
15	Թումանյան 27, 29	Ա/Բ	1.2x1.8	ներքին	4	12.11.2022-11.12.2022	48.000
	Ընդամենը						**1.768.800**
	ԱԱՀ 20%						**353.760**
	Ընդամենը ներառյալ ԱԱՀ						**2.122.560**

Ծառայությունների մատուցման ժամկետի սկիզբը հաշվարկվում է տեղաբաշխման ակտի ստորագրման ամսաթվից:

Գովազդատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Գովազդակիր
«Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ

Նախագահ՝

Գ. Նուշիկյան

04.11.2022թ. գովազդային պաստառների տպագրման, տեղաբաշխման և գովազդի տարածման մասին թիվ 22/121 պայմանագրին կից
տեղաբաշխման ակտ

ք. Երևան **12.11.2022թ.**

Սույն ակտը կազմված է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի և «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊ ընկերության, ի դեմս նախագահ Գ. Նուշիկյանի միջև, առ այն, որ 04.11.2022թ. գովազդային պաստառների տպագրման և գովազդի տարածման մասին թիվ 22/121 պայմանագրի համաձայն, «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊ ընկերությունը պատշաճ կերպով տպագրել և տեղաբաշխել է գովազդային պաստառները, ինչպես նաև սույն ակտում սահմանված ամսաթվերով սկսել է իրականացնել գովազդի տարածման ծառայություններ ըստ հետևյալի.

	Գովազդային վահանակների հասցե	Կողմ	Չափ	Լուս.	Քանակ	Ծառայու-թյունների մատուցման ժամկետ
1	Արշակունյաց 3	Բ	3x6	արտաքին	1	12.11.2022-11.12.2022
2	Արմենակյան-Հերացի	Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022
3	Բաղրամյան Սոսե	Ա/Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022
4	Կիևյան 8	Ա/Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022
5	Կիևյան 18	Բ	3x6	ներքին	1	12.11.2022-11.12.2022
6	Կիևյան 32 (Prizmatron)	Ա	4x12	արտաքին	1	12.11.2022-11.12.2022
7	Կասյան 2 (Տանիք)	Ա	3x12	արտաքին	1	12.11.2022-11.12.2022
8	Կարապի Լիճ	Բ	1.2x1.8	ներքին	7	12.11.2022-11.12.2022
9	Մաշտոց - 35-37	Ա	1.2x1.8	ներքին	3	12.11.2022-11.12.2022
10	Մաշտոց - Օպերա	Բ	1.2x1.8	ներքին	4	12.11.2022-11.12.2022
11	Մաշտոց Պուշկին	Ա	1.2x1.8	ներքին	4	12.11.2022-11.12.2022
12	Սայաթ-Նովա (Սկզբնամաս)	Ա/Բ	1.2x1.8	ներքին	6	12.11.2022-11.12.2022
13	Թումանյան 30, 32, 34	Ա/Բ	1.2x1.8	ներքին	6	12.11.2022-11.12.2022
14	Թումանյան 25	Ա	1.2x1.8	ներքին	1	12.11.2022-11.12.2022
15	Թումանյան 27, 29	Ա/Բ	1.2x1.8	ներքին	4	12.11.2022-11.12.2022

Գովազդատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան

Գովազդակիր
«Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ

Նախագահ՝

Գ. Նուշիկյան

NUSHIKYAN

Հավելված թիվ 22/194

Երևանի քաղաքապետարանի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն պետի ժ/պ

Հ. Զոհրաբյանին `

Digitally signed by ZOHRABYAN HOVHANNES
4001880288
Date: 2022.11.04 13:55:50 AMT

ՍՊԸ	Նուշիկյան Ասոցիացիա
Վարչական շրջան	Կենտրոն
Չափ	1.2 x 1.8
Գովազդի տարածման ժամկետ	12.11.2022 - 11.12.2022
	Կարապի Լիճ Մաշտոց - 35-37 Մաշտոց - Օպերա Մաշտոց Պուշկին Սայաթ-Նովա (Սկզբնամաս) Թումանյան 30, 32, 34 Թումանյան 25 Թումանյան 27, 29

Հավելված թիվ 22/193

Երևանի քաղաքապետարանի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն պետի ժ/պ

Հ. Զոհրաբյանին `

Digitally signed by ZOHRABYAN HOVHANNES
4001880288
Date: 2022.11.04 13:10:29 AMT

ՍՊԸ	Նուշիկյան Ասոցիացիա
Վարչական շրջան	Կենտրոն ,Արաբկիր
Չափ	3x6, 3x12, 4x12
Գովազդի տարածման ժամկետ	12.11.2022-11.12.2022
Հասցե	Արշակունյաց 3 Արմենակյան –Հերացի Կասյան 2(տանիք) Կիևյան 32տանիք Բաղրամյան –Սոսե Կիեւյան 18 Կիեւյան 8